է Թիֆլիս, երկու օր սրանից առաջ ներկայացաւ պ. Կուչաևվին, որ նախագահ է Երևանեան նահանգի կալուածական յարաբերութիւնները կարգադրող յանձնաժողովի։ Նորին գերազանցութեան առաջ հաւաքված ժողովին ներկայ էր և Երևանի նահանգապետ պ. Շալիկօվ։ Տեղեկանալով պ. Կուչաևվից թէ ինչ գնով են գնահատվում Երևանեան նահանգի կալուածները, թէ թուրք և թէ հայ կալուածատէրերը յայտնեցին որ կատարելապէս աղքատանալու են, և որովհետև կալուածները գիւղացիների ձեռքով յետ գնելու ժամանակ, այն գնով որով յանձնաժողովը գնահատում է ամենալաւ հողի դեսիատինը կալուածատէրերը մի րուբլու տեղ մի կոպէկ պէտք է ստանան, այդ պատճառով նրանք ամենևին ոչինչ չեն կամենում ստանալ, որովհետև մի և նոյն է երկու տարուց յետոյ աղքատանալ թէ այժմ։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ Ռուսաստանի հրէաները պատգամաւորութիւն են ուղարկում ներքին գործերի մինիստր, կոմս Իգնատիևվի մօտ, խնդրելու համար որ հրէաներին ռուս միւս քաղաքացիներին հաւասար իրաւունքներ տրվեն։

—

«Новое Время» հաղորդում է որ Ս. Պետերբուրգի շրջանի գիւղական հասարակութիւնները խնդիրք են ներկայացրել կառավարութեանը, որ նրանց թոյլ տրվի մտցնել արհեստների դասատուութիւնը ժողովրդական դպրոցներում։

—

«Новости» լրագիրը լսել է որ վճռաւորութիւն կայ փոխարինել գլխահարկը կալուածական հարկով։

—

«Русскій Курьеръ» լրագրին հաղորդում են Կիևվից, որ հրէաների դէմ անկարգութիւն անողների վրա կայացած դատաստանով խռովարարներից գլխաւորը, Բուևվ, դատապարտված է 20 տարվայ տաժանակիր աշխատանքին աքսորանքի մէջ, Կոլբա 15 տարվայ, Սաղէնկօ 10 տարվայ և Կալանօվսկի 6 տարվայ։ Մնացածներից երկուսը դատապարտված են աքսորանքին Սիբիր, բնակութեան համար, իսկ երեքը բանտարկութեամբ երկու ամսով։

—

Կիևվում կատարվելու է հրէաների ժողովրդագրութիւնը։ Այն հրէաները, որոնք իրաւունք չունենն Կիևվում ապրելու, կաքսորվեն քաղաքից։

—

«Голосъ» լսել է որ վճռաւորութիւն կայ սահմանափակել Մոսկվայի համալսարանի բժշկական բաժնի ուսանողների թիւը։ Այդ լուրին «Порядокъ» լրագիրը աւելացնում է այն տեղեկութիւնը իբր թէ իրանք պրոֆէսօրները գանգատվում էին որ բժշկութեան ուսանողները Մոսկվայի համալսարանում շատ բազմաթիւ են և անհնարին է դասախօսութիւններ կարդալ այդքան բազմաթիւ լսողներին, որոնցից արդէն զուգընթաց կուրսեր կազմվեցան։ Բայց մի և նոյն ժամանակ աւելացնում է «Порядокъ» լրագիրը, Ռուսաստանը բժշկների մէջ մեծ պակասութիւն է զգում։ Պարզ է որ Ռուսաստանի պէս մի ահագին պետութեան համար համալսարանների թիւը փոքր է։

—

«Соврем. Извѣст.» լրագիրը հաղորդում է որ այս րոպէիս երևելի ռուս րոմանիստ Տուրգենեվ Մոսկվայում է գտնվում։ Նա նորերումս ներկայ գտնվեցաւ Պետրովսկու թատրոնում Օստրովսկու «Лѣсъ» անունով պիէսայի ներկայացմանը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

—

Իշխան Բիսմարկ, ինչպէս հաղորդում են Բերլինից, շարունակարար ուշադրութիւն չէ դարձնում և արհամարհանքով է վերաբերվում պարլամենտական իրաւունքներին։ Մայիսի 27-ին, պարլամենտական երևոյթի ժամանակ Բիսմարկ ասել է, որ պէտք է սահմանափակել պարլամենտական վիճաբանութիւնները, այնպէս որ րայխստագի մէջ պատգամաւորները իրաւունք չունենան որոշված ժամանակամիջոցից աւելի խօսել։ Տարաբաղդաբար իշխանը չէ յայտնել, թէ այդ կանօնը կը գործադրվի արդեօք նոյնպէս և կառավարութեան անդամների վերաբերութեամբ, որոնց թւում և իշխան Բիսմարկի, որի պարլամենտական ճառերը միշտ երկար են լինում։

Նորերումս Բիսմարկին այցելեցին իշխան Գորչակօվ, գեներալ Շանցի, կոմս Սեն-Վալիէ և Գօշեն։ Չը նայելով իր հիւանդութեանը, Բիսմարկ ընդունեց նրանց և բաւական ժամանակ խօսեց նրանց հետ այն հարցերի վերաբերութեամբ, որոնք պէտք է քննվէին այդ դիպլօմատների Բերլինից անցնելու ժամանակ։

Գերմանական կառավարութեան և Վատիկանի մէջ բանակցութիւններ են կատարվում կրօնական մի քանի հարցերի վերաբերութեամբ։ Քաղաքական շրջանները համոզված են, որ այդ բանակցութիւնները համաձայնութեամբ կը վերջանան։ Գերմանական կայսրի և պապի անձնական յարաբերութիւնները շատ լաւ են։ Վիլհելմ կայսրի ծննդեան տօնի առիթով կայսր և պապը միմեանց նամակներ գրեցին։ Պապը շնորհաւորեց կայսրի տօնը և մի և նոյն նամակով յիշեցրեց, որ նրա կոչումն է հաշտութիւն հաստատել կաթօլիկ եկեղեցու և Գերմանիայի մէջ։ Կայսր պատասխանեց, թէ նա ուրախ է, որ պապի և գերմանական կառավարութեան մէջ համաձայնութիւն է կայացել եկեղեցական հարցերի վերաբերութեամբ և յանկութիւն յայտնեց, որ այժմ կատարվող բանակցութիւններն էլ նոյն հետևանքները ունենան։

Գերմանիայի շատ տեղերում մի խնդրագիր է ստորագրվում հասարակութիւնից, որ պէտք է ներկայացնվի կառավարութեանը և որի մէջ յանկութիւն է յայտնված վերջ դնել իշխանութեան վատ վարմունքին զինուորների հետ։ Խնդրագրի մէջ 'ի միջի այլոց ասված է, որ զինուորները պարտաւորվին ամեն անգամ յայտնել բարձր իշխանութեանը, երբ նրանց հետ իրանց գլխաւորները վատ կը վարվին։

ԹԻՒՐՔԻԱ

—

Կ. Պօլսից „Daily News“ լրագրին հաղորդում են մայիսի 28-ից հետևեալը։ Այս շաբաթ սուլթանի պալատի մէջ քննութիւն կատարվեցաւ Միտհադ-փաշայի գործի մասին։ Այստեղ համոզված են, որ մեղադրվածները ենթարկվել են տանջանքների։ Յայտնի չէ, թէ որքան իրաւացի է այդ համոզմունքը, միայն թէ հասարակական կարծիքը չափազանց վրդովված է պալատական դատաւորների բռնած ընթացքից։ Ինչ վճիռ էլ կայացնի դատարանը, ոչ ոք չի հաւատայ նրա արդարութեանը, եթէ գործը փակված դռներով քննվի։ Միտհադ-փաշայի խնդիրքին, նրա անձնաւորութիւնը ապահովելու մասին մինչև կանօնաւոր դատարանի վճռի կայացնելը, արդարութեան մինիստր Ջևդեթ-փաշա պատասխանեց, որ Թիւրքաց դատարանները և քրէական օրէնքները կատարելապէս եւրոպական ձևով են կազմված։ Այդ պատասխանը իրաւացի է և հետևապէս աւելի էլ անհեթի կը լինի գաղտնի դատարանը։ Տեղական թիւրք լրագիրները, որոնք անմիջապէս Բ. Դռնից հրահանգներ են ստանում, Միտհադ-փաշայի և միւս մեղադրվածների մասին վատ են խօսում։ Ակներև է, որ նրանք հրահանգ են ստացել հասարակական կարծիքը մեղադրվածների դէմ գրգռելու համար։ Հասարակութիւնը ոչինչ չը գիտէ քննութեան ընթացքի մասին և այդ հանգամանքը առիթ է տալիս կարծելու, թէ դատաստանը սկսված է արդէն վաղուց որոշված վճիռ կայացնելու նպատակով վտանգաւոր հակառակորդներից ազատվելու համար։ Մի և նոյն ժամանակ մեղադրող իշխանութիւնը այնքան շատ վկաներ ունի, որ անպատճառ հարկաւոր է հրապարակական դատաստան անել։

Միտհադ-փաշա Պերայի մէջ բազմաթիւ կուսակիցներ և գործակատարներ ունէ։ Տեղական երկու լրագիրները „Phare du Bosphore“ և „Stamboul“ Միտհադին պաշտպանող յօդուածներ տպեցին և այդ լրագիրներից առաջինը արգելվեցաւ։ Նորերումս լուր տարածվեցաւ, որ Մահմուդ-Նեդիմ-փաշա հրաժարական է տուել այն պատճառով, որ սուլթանը բաւական խըստութեամբ չէ վերաբերվում դատապարտվածներին։ Պատմում են, որ դատաստանական այդ գործի գլխաւոր պատճառը Մահմուդ-Նեդիմ-փաշայի թշնամութիւնն է դէպի Միտհադ-փաշան և միւս մեղադրվածները։ Այդ ճիշդ չէ, որովհետև, երբ երեք տարի առաջ կէս գիշերին Միտհադ-փաշա տարվեցաւ շոգենաւը և Բրինդիզի արտաքսվեցաւ, Մահմուդ-Նեդիմ-փաշան էլ այդ ժամանակ աքսորանքի մէջ էր։

ՖՐԱՆՍԻԱ

—

Յունիսի 2-ին վախճանվեցաւ գիտնական լեզուագէտ Լիտրէ։ Նա մկրտված չէր և ընդունեց մկրտութիւնը մահուան մահճի մէջ։ Իր մահից կէս տարի առաջ Լիտրէ բարեկամացաւ Գիւվիէէն աբեղայի հետ, որ գրեթէ ամեն օր նրան այցելում էր։ Լիտրէի մկրտութիւնը երևի կատարվեցաւ այդ աբեղայի ազդեցութեամբ։ Այսպէս թէ այնպէս Լիտրէ վախճանվեցաւ, ունեցաւ եկեղեցական յուղարկաւորութիւն և թաղվեցաւ քրիստոնէական կանօնների համեմատ։ Կաթօլիկ հոգևորականութիւնը աշխատեց այդ տխուր հանդէսը առանձին շքեղութեամբ կատարել։ Դագաղը, եկեղեցի տանելու ժամանակ, շրջապատված էր հոգևորականներով, իսկ եկեղեցու դռանը նրան հանդիպեցին բազմաթիւ աբեղաներ և կոյսեր։ Հանգուցեալի գերեզմանի վրա նրա աշխատակից և բարեկամ Վիրուբով մի սրտաշարժ ճառ արտասանեց։ Լիտրէի մկրտութիւնը մասամբ նրանով է մեկնվում, որ նրա կինը և աղջիկը եռանդոտ կաթօլիկներ են։

Փարիզի մէջ մեծ ազդեցութիւն գործեց Րօբերտ Միտչէլի բաց նամակը իշխան Նապօլէօնին։ Միտչէլ պատմում է իր խօսակցութիւնը իշխանի հետ, որի ժամանակ վերջինը նրան ասել է, թէ նա ճանաչում է հանրապետութիւնը և կուզենար նրա նախագահը լինել։ Բայց այդ հանգամանքը չարգելեց իշխանին Տունիսի վերաբերութեամբ Իտալիային պաշտպանել իր լրագրի մէջ։ Յայտնի է, որ իշխան Նապօլէօն պըսակված է Հումբերտ թագաւորի քրոջ վրա։

Ֆրանսիական սենատի մէջ սկսվեցան վիճաբանութիւններ սկզբնական պարտադիր ուսման մասին։ Այդ օրինագծի դէմ խօսեց նախկին մինիստր Ֆալլու, որ պաշտպանում էր ազատութեան ազատութիւնը։ Մի ուրիշ օրինական ապացուցանում էր, որ կրթութեան ընդհանրացնելը քաջալերում է ծուլութիւնը, մարդուն հաւասարեցնում է անասնի հետ և սրբութիւնը կոպիտ նըպատակների գործիք է դառնում։ Հանրապետականներից մէկը յիշեցրեց այն իրողութիւնը, որ Ֆրանսիական զօրքերի 33% անգրագէտ են և որ անհրաժեշտ է գրա առաջն առնել։ Այդ հարցի մասին վիճաբանութիւնները դեռ չեն վերջացել։

Ֆրանսիական գործակատարները, որոնց յանձնված էր Անգլիայի հետ առևտրական դաշնագրութեան նախագիծը կազմել, վերադարձան Լոնդոնից առանց գործ կատարելու։ Նրանք մինչև այժմ չը կարողացան համաձայնութիւն կայացնել անգլիական գործակատարների հետ դաշնագրի ոչ մի կէտի վերաբերութեամբ։ Յունիսի կէսին Ֆրանսիական գործակատարները նորից կուղևորվեն Լոնդոն։

Ընտրողական հարցի վերաբերութեամբ ծագած անհամաձայնութիւնները սենատի և պատգամաւորների ժողովի մէջ յուսադրեցին յետադիմականներին։ Ի նկատի առնելով, որ կարող է այդպիսի անհամաձայնութիւն ծագել, չափաւոր հանրապետականները վճռել են նրա առաջն առնել և ընդունել Բարդուի օրինագիծը։ Այդ պատճառով Վադինգտօնի զեկուցումն, որ ուղղված էր օրինագծի դէմ, սենատի մէջ առաւելութեամբ ընդունվեցաւ։ Եթէ սենատը մերժի ընտրողական օրէնքը, նա կը կորցնի իր համարմունքը և աւելի մեծ նշանակութիւն կը տայ Գամբետտային։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պօլիս, 24 մայիս 81

Վերջապէս հայկական հարցը օրուան խնդիրն ըլլալ սկսաւ, և կը սպասենք անհամբեր լորտ Տըֆըրէնի գալստեան։ Բայց կարևոր է մեզ համար գիտնալ թէ ինչ կը մտածէ կառավարութիւնը. պիտի մնա՞յ իւր նախորդ որոշմանց վրայ, այն է ինքն ներմուծել բարեկարգութիւնք ի Թիւրքաց Հայաստան, թէ աւելի իմաստուն գտնելով պիտի ուզէ անսալ Եւրոպիոյ։ Պիտի դիմէ զանազան նենգութեանց ինչպէս Մօնթէնէկրոյի և յունական հարցերու միջոցին, թէ անկեղծ կերպով հայերն շահելու քաղաքականութեան պիտի հետևի։ Առ այժմ երևոյթը այնպէս է որ այս խնդրոյ մէջ Բ. Դրան քաղաքականութիւնը յայտնի կամ գաղտագողի դիմադրութիւն մը պիտի ըլլայ։ Թիւրք թերթերը սկսած են հասկցնել որ Եւրոպիոյ պահանջման շուտով գլուխ ծալելու տրամադիր չեն, արիընթացք մը պիտի ունենան։ Թէպէտ Մէսէնճէր փաստերով ցոյց կուտայ որ միշտ կառավարութեան օգտակար եղած պիտի ըլլար, եթէ անմիջապէս անսար Եւրոպիոյ և պահանջները գոհացնէր, քան թէ այսպէս խաղցնէր, բայց և այնպէս թիւրքերը անդադրում կը ջանան և քրդական միութիւնը առաջ կը քշեն։— Այս օրերս դարձեալ Ուպէտուլլահի վրա կը խօսուի ամեն կողմ. կառավարութիւնը կը հաղորդէ թէ հրաման խրկած է Շէյխին Կ. Պօլիս գալ և իւր յայտագիրը (?) ներկայացնել։ Յայտնի է որ Ուպէտուլլահ տեղէն շարժելու միտում չունի, և Հայաստանի զանազան կողմերէ ի Պոլսոյ ժողովուած զինուորներն մեծ օգուտ մը չունին նորա ձեռնարկներն ջլատելու։ Բայց այս հրաւէրն այս զինուորական ցոյցերն գուցէ բաւական համարուին համոզելու պարոններն թէ Բ. Դուռը ըրաւ ինչ որ կարելի էր Ուպէտուլլահը իւր խորհուրդներէն ետ կեցնելու համար։ Բայց պարոնները ալ շուտով համոզուող չեն և գիտեն թէ Շէյխի շարժումներն Վոսփորէն կը քաջալերուին պարսից ու հայոց դէմ։— Մեր Պատրիարքը ու պարսից Կ. Պոլսոյ դեսպանը այս մասին կարծեաց փոխանակութիւն մը ըրին։ Պարսկաստանէն Կ. Պոլսոյ Ախթէր պարսկերէն թերթին գրուած նամակէ մը կիմանանք թէ պարսիկ քիւրդերու Ուլէմաները կրօնական ժողով մը գումարելով, համոզում գոյացուցեր են թէ կարող են 100,000 զինուոր մատակարարել պարսից իշխանութեան, եթէ նա գոհացնէ քիւրդ ցեղերը և այս իրենց համոզումը տեղեկագրով մը պաշտօնապէս հաղորդեր են Շահին։ Հարիւր հազար զինուոր. չափազանցութեան սահմանէն ալ կանցնի. կերևի թէ քիւրդերն սկսած են ամեն կողմ երկրաչափական յառաջատութեան օրինօք աճիլ։ Ուպէտուլլահ ալ իր մէկ անհատական նամակին մէջ, զոր Մէսէնճէր կը հրատարակէ, կըսէ թէ քիւրդ ազգութիւնը 500,000-էն աւելի